ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «22» 03 2017թ. № 214-Ա

«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ (ՄՄ) ՄԻ ՇԱՐՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 28 որոշմամբ հաստատված կարգի քսանիններորդ պարբերությունը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 53 որոշման 1-ին կետի ա) ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հունիսի 20-ի «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մի շարք տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» №580-Ա հրամանը և հրամանով հաստատված վկայականը՝ Ն-03(Հ-03)2014:

2. Սահմանել, որ Ն-03(Հ-03)2014 վկայականով հաստատված տեխնիկական կանոնակարգերի պահանջներին (բացառությամբ ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի) համապատասխանության գնահատման տրված փաստաթղթերը վավերական են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի հունվարի 2-ը:
3. Սահմանել, որ Ն-03(Հ-03)2014 վկայականով հաստատված ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման տրված փաստաթղթերը վավերական են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը:
4. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի №1 հավելվածում նշված ԵԱՏՄ (ՄՄ) տեխնիկական կանոնակարգերի պահանջներով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:
5. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի №2 հավելվածում նշված ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջներով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:
6. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման մարմին նշանակել 3 տարի ժամկետով, տրամադրել նշանակման վկայական և շնորհել նույնականացնող համար՝ Ն-03(Հ-03)2017:
7. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիան գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

/ ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված №2
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2017 թ.
Մարտի 22-ի N 214-Ա հրամանի

ՑԱՆԿ

ՀՀ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Հանքային պարարտանյութերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» №1692-Ն որոշում
2. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» №1795-Ն որոշում